ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(Սեպտեմբեր 2002)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, բանկային համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և բանկային
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և բանկային վիճակագրությունում ընդգրկված է
ՀՀ միջազգային պահուստների, դրամական ագրեգատների,
ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերաբերյալ
տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ[1]

Տնտեսական աճ: 2002 թ. հունվար-սեպտեմբերին տնտեսական աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 11.0%: ՀՆԱ աճը պայմանավորվել է հիմնականում արդյունաբերության (ազդեցությունը ՀՆԱ աճի վրա կազմել է 2.5 տոկոսային կետ), շինարարության (3.6) և ծառայությունների (2.3) աճով: ՀՆԱ դեֆլյատորը 2002 թ. հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 102.5%:

Սղաճ: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2002 թ. սեպտեմբերին գրանցվել է սպառողական գների ընդհանուր մակարդակի 0.6%-ով անկում՝ պայմանավորված հիմնականում «Չկնամթերք» և «Միրգ» ապրանքախմբերի գների համապատասխանաբար 15.3%-ով և 11.5%-ով անկմամբ: Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ գների ընդհանուր մակարդակի անկումը կազմել է 4.2%: Ընդ որում, բնականոն սղաճը կազմել է -3.3 %, սեզոնային ապրանքների գները նվազել են 16.3%-ով, իսկ պետության կողմից կարգավորվող ծառայությունների սակագներն աճել 1.9%-ով: Արդյունքում, սեզոնային ապրանքների գների փոփոխությունն ապահովել է սղաճի –1.66 տոկոսային կետը, պետության կողմից կարգավորվող ծառայությունների սակագների փոփոխությունները՝ 0.16 տոկոսային կետը, իսկ բնականոն սղաճը՝ -2.69 տոկոսային կետը: Բնականոն սղաճի բացասական մակարդակը պայմանավորված է բնականոն սղաճի հաշվարկում ընդգրկված «Չկնամթերք», «Կաթնամթերք» և «Մսամթերք» ապրանքախմբերի գների զգալի անկմամբ:

2002 թ. հունվար-սեպտեմբերին, 2001 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, սպառողական գների ինդեքսը կազմել է 101.1%, իսկ սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ՝ 99.4%:

Արտաքին հատված: 2002 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ապրանքների արտահանումը կազմել է 355.4 մլն ԱՄՆ դոլար (ՖՕԲ գներով)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 46%-ով: Արտահանման աճը պայմանավորվել է հիմնականում «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման գծով՝ շուրջ 2.2 անգամ և «Մանածագործական իրեր» ապրանքախմբի արտահանման գծով՝ շուրջ 1.4 անգամ:

Ներմուծումը կազմել է 674.3 մլն ԱՄՆ դոլար (ՍԻՖ գներով)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճելով 8.1%-ով: Զգալի աճ է գրանցվել «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ներմուծման ծավալների գծով՝ 92.2%: Իսկ որոշ ապրանքախմբերի ներմուծման ծավալները կրճատվել են (մասնավորապես «Հանքահումքային մթերքներ» ապրանքախմբինը՝ 16.2%-ով): Ընդ որում, պետք է նշել, որ առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի, արտահանումն աճել է 8.6%-ով, իսկ ներմուծումը կրճատվել 2.5%-ով:

Արդյունքում, 2002 թ. հունվար-սեպտեմբերին առևտրային հաշվեկշռի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, նվազել է 16.1%-ով և կազմել 318.9 մլն ԱՄՆ դոլար:

2002 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին անվանական հաշվարկային փոխարժեքը կազմել է 569.99 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ արժեզրկվելով 3.2%-ով: Սեպտեմբեր ամսվա միջին փոխարժեքը կազմել է 564.47 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժեզրկվելով 1.1%-ով:

Պետական բյուջե: 2002 թվականի սեպտեմբերին պետական բյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են 22.3 մլրդ դրամ՝ ծրագրված 23.9 մլրդ դրամի փոխարեն, իսկ հարկային եկամուտները՝ 18.6 մլրդ դրամ՝ ծրագրված ցուցանիշին համապատասխան (ծրագրում ներառված չեն մարդասիրական օգնության գծով վճարները): Ընդ որում, երրորդ եռամսյակի փաստացի եկամուտները կազմել են եռամսյակի ծրագրված համամասնությունների 103%-ը, իսկ հարկերը՝ 104%-ը: Չնայած եկամուտների հավաքագրման դրական միտումներին, հարկերի հավաքագրումն ուղեկցվել է ամսվա վերջին օրերին արտահայտվող խիստ սեզոնային դրսևորմամբ: Այսպես, ամսվա վերջին երկու օրերին հավաքագրված հարկերը կազմել են ամսվա ցուցանիշի 42.6 %-ը՝ օգոստոսի 47.3%-ի դիմաց:

Փաստացի ծախսերը կազմել են 17.6 մլրդ դրամ՝ ծրագրված 27.2 մլրդ դրամի փոխարեն, ինչը հիմնականում պայմանավորված էր նախատեսվածի համեմատ ՀՀ գանձապետական միասնական հաշվում միջոցների 8.0 մլրդ դրամ ավելի կուտակմամբ և ոչ հարկային եկամուտների 1.6 մլրդ դրամ ծրագրված մակարդակից շեղմամբ:

Նշված ժամանակահատվածում պետբյուջեի հավելուրդը կազմել է 4.7 մլրդ դրամ՝ ծրագրված –3.3 մլրդ դրամ պակասուրդի փոխարեն: Հավելուրդն առաջացել է 0.3 մլրդ դրամ՝ պետական արժեթղթերից ստացված զուտ մուտքերի, -0.1 մլրդ դրամ՝ արտաքին ֆինանսավորման և 4.9 մլրդ դրամ՝ Գանձապետական միասնական հաշվի օգոստոս ամսվա մնացորդի վրա միջոցների կուտակմամբ:

ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ ՀՀ կառավարության պարտավորություններն ամսվա ընթացքում նվազել են 5.1 մլրդ դրամով և կազմել շուրջ –11.3 մլրդ դրամ (ներառյալ ՕԻԳ-երի միջոցները):

[1] *«Տնտեսական աճ» և «Արտաքին հատված» բաժինների ցուցանիշները ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախնական տվյալներն են:*

Դրամավարկային քաղաքականություն: Հաշվի առնելով հուլիս-օգոստոսին արձանագրված 8% դեֆլյացիան, ինչպես նաև այն, որ օրինաչափություն է դարձել Կառավարության միասնական հաշվում միջին օրական մինչև 2.0 մլրդ դրամ մնացորդի առկայությունը՝ սեպտեմբերի դրամավարկային ծրագրով նախատեսվում էր փողի բազայի 6.6% աճ՝ այն կառավարելով տատանումների թույլատրելի միջակայքի վերին սահմանի (83.8 մլրդ դրամ) շրջակայքում: Ամսվա ընթացքում սպասվում էին Լինսի հիմնադրամի դրամաշնորհի՝ օգոստոսի չստացված և սեպտեմբերի մասնաբաժինները (մոտ 6.4 մլրդ դրամ ընդհանուր գումարով) և 2.6 մլրդ դրամին համարժեք Հոլանդական դրամաշնորհը: Սեպտեմբերին պետք է իրականացվեր նաև մոտ 2.4 մլրդ դրամին համարժեք արտաքին պարտքի սպասարկում և նույնքան էլ՝ ռեպո համաձայնագրերի մարում:

Ելնելով վերոնշյալից Կենտրոնական բանկը որոշակի ճշգրտում էր կատարել նաև իր գործիքների կիրառման առումով, քանի որ առավել ընդլայնողական դրամավարկային քաղաքականության իրականացումը ենթադրում էր ավտոնոմ ներհոսքին զուգահեռ իրացվելիության ներարկում: Ընդ որում, հիմնական ներարկող գործիք էր ընտրվել արտարժույթի առքը՝ պայմանավորված մեծածավալ ֆինանսական ներհոսքով, որին զուգահեռ, ելնելով փողի բազան տատանումների թույլատրելի միջակայքում կառավարելու խնդրից, կկիրառվեր ներքաշող ուղղությամբ ռեպո համաձայնագրերի կնքման գործիքը: Այս մասին սեպտեմբերի առաջին կեսին Կենտրոնական բանկը հանդես է եկել հայտարարությամբ:

Սեպտեմբերի վերջին ձևավորվել է փողի բազայի 80.4 մլրդ դրամ մակարդակ՝ ամսվա ընթացքում աճելով շուրջ 2.0 մլրդ դրամով և գտնվելով ստորին սահմանից փոքր-ինչ ցածր: Սա այն դեպքում, երբ ստացվել են Հոլանդական դրամաշնորհն ու Լինսի հիմնադրամի դրամաշնորհի ակնկալվող ծավալի ավելի քան 80%-ը (5.2 մլրդ դրամ), ԿԲ-ն արտարժույթի շուկայից գնել է մոտ 5.0 մլրդ դրամին համարժեք արտարժույթ, և փողի բազան ամսվա ընթացքում գրեթե միշտ գերազանցել է վերին սահմանը՝ հասնելով առավելագույնը 87.8 մլրդ դրամի: Կտրուկ նվազում գրանցվել է վերջին օրը, երբ բյուջեի խոշորածավալ հարկային մուտքերի հետևանքով միասնական հաշվի մնացորդը հասել է աննախադեպ մեծ չափի՝ ավելի քան 11.5 մլրդ դրամի՝ նախորդ ամսվա վերջի 6.1 մլրդ դրամի դիմաց: Ընդ որում, սեպտեմբերն առանձնահատուկ էր նաև միասնական հաշվի միջին օրական մնացորդի առումով, որը կազմել է 4.5 մլրդ դրամ:

ԿԲ ՁՆԱ-ն սեպտեմբերին նվազել են 5.7 մլրդ դրամով՝ պայմանավորված հիմնականում Կառավարության զուտ պարտավորությունների նվազմամբ, քանի որ մյուս երկու բաղադրատարրերը փոփոխվել են հակադիր ուղղությամբ և գրեթե չեզոքացրել միմյանց ազդեցությունը ՁՆԱ վրա: Բանկերի զուտ պարտավորությունները նվազել են 2.0 մլրդ դրամով՝ ռեպո համաձայնագրերի մարման և «Վերականգնման վարկերի բանկի» (KfW) միջոցների հաշվին վարկերի տրամադրման արդյունքում: Բանկային համակարգի կտրվածքով իրացվելիության միջին օրական ավելցուկի բարձր մակարդակի պարագայում (միջին ամսական 3.0 մլրդ դրամ) որոշ բանկեր դիմել են ԿԲ-ում ավանդադրման մշտական հնարավորության գործիքին՝ 245 մլն դրամ ընդհանուր ծավալով:

ԿԲ զուտ այլ ակտիվների մոտ 1.4 մլրդ դրամի աճը հիմնականում բացատրվում է ամսվա վերջին օրը գնված 2 մլն դոլարի հաշվապահական ձևակերպմամբ:

ՀՀ ԿԲ ՁԱԱ-ն աճել են մոտ 7.7 մլրդ դրամով և սեպտեմբերի վերջին կազմել 94.9 մլրդ դրամ: Աճը հիմնականում տեղի է ունեցել վերոնշյալ դրամաշնորհների և գնված արտարժույթի հաշվին: Միաժամանակ, իրականացվել է 2.4 մլրդ դրամի արտաքին պարտքի սպասարկում և 2.0 մլրդ դրամի այլ փոխարկումներ:

Սեպտեմբերին փողի բազայում խոշոր աճ է դիտվել կանխիկի գծով՝ 3.6 մլրդ դրամ, իսկ թղթակցային հաշվի միջոցները նվազել են 1.5 մլրդ դրամով: Ընդ որում, վերջինս ամսվա ընթացքում, և հատկապես երկրորդ կեսին, պահպանել է բարձր մակարդակ, կտրուկ նվազել սեպտեմբերի 30-ին (3.7 մլրդ դրամ)՝ պայմանավորված բյուջեի հարկային ծրագրի կատարմամբ:

Սեպտեմբերին ԿԲ կողմից իրականացված առավել ընդլայնողական քաղաքականությունն իր արտացոլումն է ունեցել նաև փողի ագրեգատների վարքագծում: Այսպես, փողի զանգվածը[2] (առանց կուտակված տոկոսների) աճել է 13.4 մլրդ դրամով կամ մոտ 8.2%-ով և ամսվա վերջին կազմել 177.2 մլրդ դրամ: Աճի շուրջ կեսը՝ 7.1 մլրդ դրամը, բաժին է ընկել դրամային ավանդներին (այդ թվում՝ 3.3 մլրդ դրամը ցպահանջ և 3.8 մլրդ դրամը ժամկետային ավանդների հաշվին), իսկ մնացած մասը գրեթե հավասարաչափ բաշխվել է շրջանառությունում եղած կանխիկի (ավելի քան 3.0 մլրդ դրամ) և արտարժութային ավանդների (3.3 մլրդ դրամ) միջև: Դրամային զանգվածն աճել է մոտ 10.1 մլրդ դրամով և կազմել 94.5 մլրդ դրամ:

Ավանդների մեծածավալ աճով պայմանավորված՝ ամսվա ընթացքում արձանագրվել է փողի և դրամային բազմարկիչների աճ: Դրանք ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմել են համապատասխանաբար 2.2 և 1.17 մակարդակ՝ նախորդ ամսվա վերջի 2.09-ի և 1.08-ի համեմատ:

Ֆինանսական շուկայում սեպտեմբերին դիտվել է տոկոսադրույքների որոշ չափով նվազում, որը հիմնականում պայմանավորվել է իրացվելիության բավականին բարձր մակարդակով: ԿԲ գործառնությունների տոկոսադրույքներն այս ամիս ևս մնացել են անփոփոխ:

---

[2] Փողի և դրամային զանգվածների հաշվարկում ներառված չեն ԿԲ կողմից նշանակված ժամանակավոր ադմինիստրացիայի և խնամակալության տակ գտնվող 6 բանկերի տվյալները:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Ամվամում	*Հունվար-օգոստոս*	*2002 թ. հունվար-օգոստոսի իրական աճի ինդեքսը 2001 թ. հունվար-օգոստոսի նկատմամբ (%)*	*Հունվար-սեպտեմբեր*[1]	*2002 թ. հունվար-սեպտեմբերի իրական աճի ինդեքսը 2001 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ (%)*[1]
Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)*	692274.4	110.1	878527.4	111.0
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	102.9	-	102.5	-
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ. աճողական)*[2]	539.7	109.7	648.8	110.5
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)*	209204.8	109.7	240443.6	111.0
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	3754.1	96.3	4146.0	94.8
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)*	182947.1	101.2	246347.5	102.8
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)*	338509.5	114.8	388152.9	115.1
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)*	71746.8	132.2	91352.4	133.4
Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)*	478303.7	108.9[2]	553585.3	111.3[2]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)*	479352.7	108.4[2]	551134.3	109.7[2]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(դրամ)*	25587	110.0[2]	25709	108.9[2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1418.3	-	1418.0	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	135.6	-	135.1	-
Գործազրկության մակարդակը (%)	9.6	-	9.5	-

II. Արտաքին հատված

Ամվամում	*Հունվար-օգոստոս*	*2002 թ. հունվար-օգոստոսը 2001 թ. հունվար-օգոստոսի նկատմամբ (%)*	*Հունվար-սեպտեմբեր*[1]	*2002 թ. հունվար-սեպտեմբերը 2001 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ (%)*[1]
Արտահանում *(ՖՕԲ. մլն ԱՄՆ դոլար)*	300.6	138.1	355.4	146.0
Ներմուծում *(ՍԻՖ. մլն ԱՄՆ դոլար)*	580.5	105.3	674.3	108.1
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ *(մլն ԱՄՆ դոլար)*	279.8	83.9	318.9	83.9

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
		նախորդ ամսվա նկատմամբ (%)		
Հունվար	102.2	102.9	101.0	101.8
Փետրվար	99.3	100.8	99.8	95.8
Մարտ	99.4	99.6	100.0	99.5
Ապրիլ	102.5	99.8	99.6	98.8
Մայիս	101.7	101.6	100.1	100.4
Հունիս	99.5	106.1	100.2	73.3
Հուլիս	95.0	98.3	100.0	80.6
Օգոստոս	97.0	99.4	100.0	75.4
Սեպտեմբեր	99.4	99.3	100.4	94.9
2002 թ. հունվար-սեպտեմբերը 2001 թ. հունվար-սեպտեմբերի համեմատությամբ	101.1	103.0	104.7	103.6

IV. Սղաճ

ժամանակաշրջան	*2000*	*2001*	*2002*	*2002*
	նախորդ ամսվա նկատմամբ (%)			*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	1.9	4.6	2.2	2.2
Փետրվար	0.1	-0.9	-0.7	1.5
Մարտ	-0.4	0.0	-0.6	0.9
Ապրիլ	-0.8	-0.1	2.5	3.4
Մայիս	-0.3	1.6	1.7	5.2
Հունիս	-0.3	-1.3	-0.5	4.6
Հուլիս	-2.0	-2.7	-5.0	-0.6
Օգոստոս	-1.3	-0.7	-3.0	-3.6
Սեպտեմբեր	0.3	-1.2	-0.6	-4.2
Հոկտեմբեր	0.0	0.1		
Նոյեմբեր	0.9	1.2		
Դեկտեմբեր	2.4	2.4		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	0.4	2.9		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	-0.8	3.1		

[1] Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախնական տվյալների:
[2] ՀՀ ԿԲ հաշվարկներով:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]


(մլն դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ				Կառավարության ավանդներ						Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2] փոփոխությունը	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ[2][3]
	Կենտրոնական բանկի կարճաժամկետ պետական արժեթղթեր	Կենտրոնական բանկի երկարաժամկետ պետական արժեթղթեր	Պետ. արժեթղթերի ուսհսկում	Ընդամենը	Կենտրոնական բանկում Կառավարության հաշիվներ	Կենտրոն. բանկի հաշիվներ արտարժ.	ՇԻԳ-երի միջոցներ դրամով	ՇԻԳ-երի միջոցներ արտարժույթով	ՀՀ տոհմատ. պետա-կան հիմնադրամի միջոցներ	Ընդամենը		
2001												
Դեկտեմբեր	1444	8838	-92	10190	1739	142	6	0	36	1922	8268	***8478***
2002												
Հունվար	1164	7577	-51	8690	13895	142	6	0	8	14051	-5360	***-5100***
Փետրվար	958	7381	-37	8301	7562	141	6	0	9	7720	581	***747***
Մարտ	754	6741	-26	7469	8151	128	7	0	37	8322	-854	***-710***
Ապրիլ	678	6451	-17	7112	6853	127	8	0	0.5	6988	124	***348***
Մայիս	594	5795	-9	6380	8490	127	17	0	3	8637	-2257	***-2155***
Հունիս	216	5611	-2	5825	10135	126	13	0	0.1	10274	-4450	***-4368***
Հուլիս	0	4490	0	4490	5373	145	17	0	0.0	5536	-1046	***-905***
Օգոստոս	0	3977	0	3977	9974	144	14	0	0.0	10132	-6155	***-6079***
Սեպտեմբեր	0	3929	0	3929	15061	150	13	0	0.0	15224	-11295	***-11233***

[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Կառավարության նկատմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:


[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ[1, 2]

(մլն դրամ)

Ժամկետ	Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ[3]	Կառավարության ավանդները ԿԲ-ում[4]	Ընդամենը
2001			
Դեկտեմբեր	17063	1922	18986
2002			
Հունվար	17571	14051	31622
Փետրվար	17527	7720	25246
Մարտ	18177	8322	26499
Ապրիլ	17678	6988	24666
Մայիս	17839	8637	26477
Հունիս	17875	10274	28149
Հուլիս	17466	5536	23002
Օգոստոս	17564	10132	27696
Սեպտեմբեր	18097	15224	33321



[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ: Ներկայացված տվյալները հաշիվների մնացորդներն են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

[2] Ընդգրկված չեն այն 6 բանկերի ցուցանիշները, որտեղ ՀՀ ԿԲ կողմից նշանակված է ժամանակավոր ադմինիստրացիա կամ գտնվում են խնամակալության տակ: Այդ պատճառով սույն աղյուսակի տվյալները տարբերվում են նախորդ հրապարակումների համապատասխան տվյալներից:

[3] Ընդգրկված են առևտրային բանկերի ցպահանջ և ժամկետային պարտավորությունները Գանձապետարանի նկատմամբ՝ բացառությամբ ՀՀ սոցապ. պետական հիմնադրամի նկատմամբ պարտավորությունների:

[4] Ընդգրկված են հանրապետական բյուջեի, ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և ՏԻԳ-երի միջոցները:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն դրամ)

	Դ - 01	Հ - 02	Փ - 02	Մ - 02	Ա - 02	Մ - 02	Հ – 02	Հ – 02	Օ - 02	Ս - 02
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***84908***	***91157***	***84532***	***81764***	***79629***	***80753***	***84002***	***84408***	***87192***	***94867***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-4539***	***-19316***	***-11676***	***-9406***	***-3904***	***-7952***	***-9592***	***-8032***	***-8723***	***-14439***
Կառավարություն	8268	-5361	581	-854	124	-2257	-4449	-1046	-6155	-11295
Կենտրոնական կառավարություն	8304	-5353	590	-817	124	-2254	-4449	-1046	-6155	-11295
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	-36	-8	-9	-37	0	-3	0	0	0	0
Բանկեր	3855	1920	3807	6558	7298	7430	7559	7495	11666	9698
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0	0	0	0	0	0	2363	0
ավանդներ (-)	-50	-1680	-860	-800	-45	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-16662	-15875	-16064	-15110	-11326	-13125	-12702	-14481	-14234	-12842
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***79939***	***74045***	***74683***	***74836***	***75072***	***75532***	***76280***	***78197***	***80504***	***84810***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***80369***	***71841***	***72856***	***72358***	***75725***	***72801***	***74410***	***76376***	***78469***	***80428***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	66692	58080	60305	60785	60814	61647	61787	64430	65067	68690
Պարտադիր պահուստ. (դրամով)	13489	13528	12295	11251	14674	10913	12368	11693	12954	11475
Այլ հաշիվներ	188	233	256	322	237	241	255	253	448	263
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	***6249***	***-6625***	***-2768***	***-2135***	***1124***	***3249***	***406***	***2784***	***7675***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	***-14777***	***7640***	***2270***	***5502***	***-4048***	***-1640***	***1560***	***-691***	***-5716***
Կառավարություն	-	-13629	5942	-1435	978	-2381	-2192	3403	-5109	-5140
Կենտրոնական կառավարություն	-	-13657	5943	-1407	941	-2378	-2195	3403	-5109	-5140
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	-	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ սոցապ. պետ. հիմնադրամ	-	-28	1	28	-37	3	-3	0	0	0
Բանկեր	-	-1935	1887	2751	740	132	129	-64	4171	-1968
այդ թվում՝ ռեպո համաձայն.	-	0	0	0	0	0	0	0	2363	-2363
ավանդներ (-)	-	1630	-820	-60	-755	-45	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	787	-189	954	3784	-1799	423	-1779	247	1392
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	-	***-5894***	***638***	***153***	***236***	***460***	***748***	***1918***	***2306***	***4306***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	-	***-8528***	***1015***	***-498***	***3367***	***-2924***	***1609***	***1966***	***2093***	***1959***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	-	-8612	2225	480	29	833	140	2643	637	3623
Պարտադիր պահուստ. (դրամով)	-	39	-1233	-1044	3423	-3761	1455	-675	1261	-1479
Այլ հաշիվներ	-	45	23	66	-85	4	14	-2	195	-185
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	***7.4***	***-7.3***	***-3.3***	***-2.6***	***1.4***	***4.0***	***0.5***	***3.3***	***8.8***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	***326***	***-39.6***	***-19.4***	***-58.5***	***103.7***	***20.6***	***-16.3***	***8.6***	***65.5***
Կառավարություն	-	-164.8	110.8	-247.0	114.5	-1920	97.1	-76.5	488.4	83.5
այդ թվում՝ ՕԻԳ-երի միջոցներ	-	0	0	0	0	0	0	0	0	0
Բանկեր	-	-50.2	98.3	72.3	11.3	1.8	1.7	-0.8	55.7	-16.9
Զուտ այլ ակտիվներ	-	-4.7	1.2	-5.9	25.0	15.9	-3.2	14.0	-1.7	-9.8
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	-	***-7.4***	***0.9***	***0.2***	***0.3***	***0.6***	***1.0***	***2.5***	***2.9***	***5.3***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	-	***-10.6***	***1.4***	***-0.7***	***4.7***	***-3.9***	***2.2***	***2.6***	***2.7***	***2.5***
ԿԲ-ից դուրս կանխիկ դրամ	-	-12.9	3.8	0.8	0.05	1.4	0.2	4.3	1.0	5.6
Պարտադիր պահուստ. (դրամով)	-	0.3	-9.1	-8.5	30.4	-25.6	13.3	-5.5	10.8	-11.4
Այլ հաշիվներ	-	23.9	9.9	25.8	-26.4	1.7	5.8	-0.8	77.1	-41.3

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱՄ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, 1 ԱՄՆ դոլար = 561.81 դրամ, 1 ՀՓԻ = 1.2567 ԱՄՆ դոլար. 1 եվրո = 0.8904 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի = 276.5 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ[1,2]

Ցուցանիշներ	Դ - 01	Հ - 02	Փ - 02	Մ - 02	Ա - 02	Մ - 02	Հ - 02	Հ - 02	Օ - 02	Ս - 02
ՋԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-3498**	**3200**	**2876**	**2727**	**4211**	**7508**	**10677**	**13658**	**15823**	**17242**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	55176	54053	54588	60237	57105	58750	67038	75386	68942	73013
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով	-55274	-47308	-48187	-54227	-50039	-48825	-52994	-58914	-50259	-53135
Արտաքին պարտավորություններ դրամով	-3400	-3546	-3525	-3282	-2854	-2417	-3367	-2814	-2859	-2636
ՋՆԱ	96425	89411	87335	88124	86951	85168	85401	83780	84733	93953
Կառավարություն	1129	3801	4255	3238	3678	4448	4322	5101	6161	6159
Կենտրոնական կառավարություն	1186	3912	4360	3313	3772	4544	4423	5181	6238	6271
Տեղական կառավարման մարմիններ	-58	-111	-105	-75	-95	-96	-102	-80	-77	-112
Ջուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	10744	13285	10285	6265	8438	4966	6590	6173	2553	3586
Պահուստային ակտիվներ	14717	16909	14990	13304	15822	12472	14262	13738	14323	13436
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-3973	-3624	-4705	-7039	-7384	-7507	-7672	-7565	-11769	-9851
Տնտեսություն	96856	81539	83782	86554	86596	88019	88441	86903	88923	95459
Ձեռնարկություններ	60984	56175	57136	58485	59590	60583	61058	59755	61623	67488
Դրամով	18202	17450	17182	17390	17810	18104	17337	17687	18209	21003
Արտարժույթով	42783	38725	39954	41095	41780	42479	43721	42069	43413	46485
Տնտեսության այլ հատվածներ	35871	25363	26647	28069	27005	27437	27383	27148	27300	27970
Դրամով	4195	3948	4513	5171	4785	5335	6064	6516	6675	7198
Արտարժույթով	33076	22815	23533	24248	23573	23465	22682	21996	22008	22167
Ջուտ այլ ակտիվներ	-12304	-9213	-10987	-7933	-11761	-12265	-13952	-14397	-12905	-11250
Արտաքին ակտիվներ դրամով	124	125	168	102	106	66	93	94	81	80
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	1433	1246	791	5748	5375	1340	1412	1348	1465	1457
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով)	-477	-148	-30	-4836	-4638	-275	-76	-54	-39	-16
Ստորադաս վարկեր	0	0	0	0	0	0	0	0	0	0
Միջբանկային պահանջներ[3]	9178	6427	5738	6040	4991	3777	3356	5088	3885	4229
Այլ ակտիվներ	30253	29930	30898	32527	31424	33336	30172	31281	30373	30599
Միջբանկային պարտավորություններ[4]	-7274	-5017	-4041	-4425	-2447	-2692	-2857	-4840	-3370	-3726
Դրամական շուկայի գործիքներ	-90	-91	-92	-93	-94	-95	-96	-97	-98	-99
Ներդրումներ փայաբաժիններում	369	368	368	368	357	357	358	305	230	230
Ստորադաս պարտավորություններ ռեզիդենտներին	0	0	0	0	0	0	0	0	0	0
Կապիտալ հաշիվներ	-38202	-34925	-35359	-36411	-36983	-39335	-37095	-36996	-35019	-33094
Ջուտ ներբանկային հաշիվներ	332	327	374	409	319	42	196	-279	77	190
Այլ պարտավորություններ	-7985	-7457	-9802	-7364	-10170	-8787	-9415	-10247	-10489	-11099
ԱՎԱՆԴՆԵՐ[6]	**92927**	**92611**	**90211**	**90852**	**91162**	**92675**	**96077**	**97438**	**100556**	**111195**
Այդ թվում՝ սառեցված ավանդներ	8381	7946	7141	6392	5737	5549	5472	5285	5226	5384
Դրամով ավանդներ[6]	18420	19554	20416	20082	20854	21469	22398	21877	20930	28037
Ցպահանջ ավանդներ[5,6]	12073	12067	12421	12380	13286	13593	14983	14654	14103	17398
Ժամկետային ավանդներ[6]	6347	7487	7995	7702	7568	7876	7415	7223	6827	10639
Այդ թվում՝ սառեցված ավանդներ՝ դրամով	916	841	754	692	663	658	658	652	650	633
Ավանդներ արտարժույթով[6]	74506	73057	69795	70770	70308	71206	73679	75561	79626	83158
Ցպահանջ ավանդներ[6]	26516	32678	30001	32488	32669	32540	35911	36970	37700	38199
Ժամկետային ավանդներ[6]	47400	39830	39283	37801	37163	38196	37426	38224	41521	44542
Այդ թվում՝ սառեցված ավանդներ արտարժ.	7465	7106	6386	5700	5074	4891	4815	4633	4576	4751
Արտարժույթով ավանդների կուտակված տոկոսներ	590	548	510	481	475	470	342	368	404	418

[1] Ընդգրկված չեն այն 6 բանկերի ցուցանիշները, որտեղ ՀՀ ԿԲ կողմից նշանակված է ժամանակավոր ադմինիստրացիա կամ գտնվում են խնամակալության տակ: Այդ պատճառով սույն աղյուսակի տվյալները տարբերվում են նախորդ հրապարակումների համապատասխան տվյալներից:

[2] Բոլոր դասակարգումներն իրականացված են ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և բանկային վիճակագրության ձեռնարկի» հատվածային հաշվեկշիռների կազմման սկզբունքներին համապատասխան, յուրաքանչյուր գործիք ընդգրկում է հաշվարկված տոկոսները: Բոլոր արտարժութային հաշիվները հաշվարկված են շուկայական փոխարժեքներով:

[3] Ներառված է ՀՀ առևտրային բանկերի՝ միմյանց նկատմամբ պահանջների հանրագումարը:

[4] Ներառված է ՀՀ առևտրային բանկերի՝ միմյանց նկատմամբ պարտավորությունների հանրագումարը:

[5] Ընդգրկված են ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:

[6] Ներառյալ սառեցված հաշիվները և ավանդները:

ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

(մլն դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 01	Հ - 02	Փ - 02	Մ - 02	Ա - 02	Մ - 02	Հ - 02	Հ - 02	Օ - 02	Ս - 02
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2,3]	***81410***	***94357***	***87408***	***84491***	***83840***	***88261***	***94679***	***98066***	***103015***	***112109***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***76741***	***54324***	***60836***	***65545***	***66268***	***64293***	***61321***	***61964***	***61416***	***65793***
Կառավարություն	9396	-1559	4836	2384	3801	2191	-128	4056	6	-5136
Կենտրոնական կառավարություն	9490	-1440	4950	2496	3896	2290	-26	4136	83	-5024
ՀՀ սոցապ. պետական հիմնադրամ	-36	-8	-9	-37	0	-3	0	0	0	0
Տեղական կառավարման մարմիններ	-58	-111	-105	-75	-95	-96	-102	-80	-77	-112
Տնտեսություն[4]	97028	81560	83801	86573	86613	88036	88457	86921	88945	95482
Ֆեռնարկ. և կազմակերպ.	61132	56175	57136	58485	59590	60583	61058	59755	61623	67488
որից՝ կուտակված տոկոսներ	2549	2235	2269	2359	2406	2546	2591	2464	2553	1561
Տնտեսության այլ ճյուղեր	35896	25385	26666	28088	27023	27453	27399	27166	27322	27994
որից՝ կուտակված տոկոսներ	859	787	769	745	610	536	470	462	484	118
Զուտ այլ ակտիվներ	-29683	-25677	-27801	-23412	-24146	-25934	-27008	-29013	-27535	-24553
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [5,8]	***83429***	***75362***	***78143***	***78898***	***79519***	***81046***	***82045***	***84201***	***84368***	***94460***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	***157345***	***147894***	***147454***	***149243***	***149359***	***151785***	***155384***	***159412***	***163793***	***177216***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց սառեցված հաշ.)*	***148964***	***139947***	***140313***	***142850***	***143622***	***146236***	***149912***	***154127***	***158567***	***171832***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [6,8]	***158151***	***148681***	***148244***	***150036***	***150108***	***152554***	***156000***	***160030***	***164431***	***177902***
Շրջանառությունում կանխիկ դրամ	65037	55839	57778	58862	58709	59638	59668	62338	63427	66444
Ցպահանջ ավանդներ[7,8]	12260	12276	12650	12647	13516	13831	15236	14890	14348	17645
Այդ թվում՝ սառեցված	837	776	706	653	641	640	650	644	642	625
կուտակված տոկոսներ	184	195	209	220	185	184	157	148	161	165
ժամկետ.. խնայ. և արտարժ. ավանդ.	80855	80566	77816	78527	77883	79085	81096	82802	86657	93814
Այդ թվում՝ սառեցված	7544	7171	6435	5740	5096	4909	4822	4641	4584	4759
կուտակված տոկոսներ	622	592	581	573	564	585	459	470	477	521
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ[8]	74507	73080	69821	70826	70315	71209	73681	75579	79830	83175
Ցպահանջ[8]	26518	32701	30028	32544	32676	32543	35912	36987	37904	38215
Ժամկետային[8]	47400	39830	39283	37801	37163	38196	37426	38224	41521	44542
Այդ թվում՝ սառեցված արժույթ. ավանդ.	7465	7106	6387	5701	5074	4891	4814	4632	4576	4751
Արտարժ. ավանդների կուտ. տոկոսներ	590	548	510	481	475	470	342	368	404	418
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***12947***	***-6949***	***-2917***	***-651***	***4421***	***6418***	***3387***	***4949***	***9094***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-22417***	***6512***	***4709***	***723***	***-1975***	***-2972***	***643***	***-548***	***4377***
Կառավարություն	-	-10955	6395	-2452	1417	-1610	-2319	4184	-4050	-5142
Կենտրոնական կառավարություն	-	-10930	6390	-2454	1400	-1606	-2316	4162	-4053	-5107
ՀՀ սոցապ. պետական հիմնադրամ	-	-28	1	28	-37	3	-3	0	0	0
Տեղական կառավարման մարմիններ	-	53	-6	-30	20	1	6	-22	-3	-35
Տնտեսություն	-	-15468	2241	2772	40	1423	421	-1536	2024	6537
Ֆեռնարկ. և կազմակերպ.	-	-4890	968	1351	1092	1008	480	-1303	1868	5865
որից՝ կուտակված տոկոսներ	-	-248	43	92	33	155	50	-127	89	-992
Տնտեսության այլ ճյուղեր	-	-10578	1273	1421	-1052	415	-59	-233	156	672
որից՝ կուտակված տոկոսներ	-	-178	-27	-3	-122	-94	-86	-8	22	-366
Զուտ այլ ակտիվներ	-	4006	-2124	4389	-734	-1788	-1074	-2005	1478	2982
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	**-**	***-8067***	***2781***	***755***	***621***	***1527***	***999***	***2156***	***167***	***10092***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	**-**	***-9451***	***-440***	***1789***	***116***	***2426***	***3599***	***4028***	***4381***	***13423***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց սառեցված հաշ.)*	**-**	***-9017***	***366***	***2537***	***772***	***2614***	***3676***	***4215***	***4440***	***13265***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	**-**	***-9470***	***-437***	***1792***	***72***	***2446***	***3446***	***4030***	***4401***	***13471***
Շրջանառությունում կանխիկ դրամ	-	-9198	1939	1084	-153	929	30	2670	1089	3017
Ցպահանջ ավանդներ	-	16	374	-3	869	315	1405	-346	-542	3297
Այդ թվում՝ սառեցված	-	-61	-70	-53	-12	-1	10	-6	-2	-17
կուտակված տոկոսներ	-	11	14	11	-35	-1	-27	-9	13	4
ժամկետ. խնայ. և արտարժ. ավանդ.	-	-289	-2750	711	-644	1202	2011	1706	3855	7157
Այդ թվում՝ սառեցված	-	-373	-736	-695	-644	-187	-87	-181	-57	175
կուտակված տոկոսներ	-	-30	-11	-8	-9	21	-126	11	7	44
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ	-	-1427	-3259	1005	-511	894	2472	1898	4251	3345
Ցպահանջ	-	6183	-2673	2516	132	-133	3369	1075	917	311
Ժամկետային	-	-7570	-547	-1482	-638	1033	-770	798	3297	3021
Այդ թվում՝ սառեցված արժույթ. ավանդ.	-	-359	-719	-686	-627	-183	-77	-182	-56	175
Արտարժ. ավանդների կուտ. տոկոսներ	-	-42	-38	-29	-6	-5	-128	26	36	14

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)										
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	*15.9*	*-7.4*	*-3.3*	*-0.8*	*5.3*	*7.3*	*3.6*	*5.0*	*8.8*
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	*-29.2*	*12.0*	*7.7*	*1.1*	*-3.0*	*-4.6*	*1.0*	*-0.9*	*7.1*
Կենտրոնական կառավարություն	-	115.2	443.8	-49.6	56.1	-41.2	-101.1	16008	-98.0	-6153.0
Տնտեսություն	-	-15.9	2.7	3.3	0.0	1.6	0.5	-1.7	2.3	7.3
Չեռնարկ. և կազմակերպ.	-	-8.0	1.7	2.4	1.9	1.7	0.8	-2.1	3.1	9.5
Տնտեսության այլ ճյուղեր	-	-29.5	5.0	5.3	-3.8	1.5	-0.2	-0.9	0.6	2.5
Զուտ այլ ակտիվներ	-	-13.5	8.3	-15.8	3.1	7.4	4.1	7.4	-5.1	-10.8
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	-	*-9.7*	*3.7*	*1.0*	*0.8*	*1.9*	*1.2*	*2.6*	*0.2*	*12.0*
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոս.)*	-	*-6.0*	*-0.3*	*1.2*	*0.1*	*1.6*	*2.4*	*2.6*	*2.7*	*8.2*
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց սառեցված հաշ.)*	-	*-6.1*	*0.3*	*1.8*	*0.5*	*1.8*	*2.5*	*2.8*	*2.9*	*8.4*
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	-	*-6.0*	*-0.3*	*1.2*	*0.0*	*1.6*	*2.3*	*2.6*	*2.8*	*8.2*
Շրջանառությունում կանխիկ դրամ	-	-14.1	3.5	1.9	-0.3	1.6	0.1	4.5	1.7	4.8
Ցպահանջ ավանդներ	-	0.1	3.0	0.0	6.9	2.3	10.2	-2.3	-3.6	23.0
Այդ թվում՝ սառեցված	-	6.0	7.2	5.3	-15.9	-0.5	-14.7	-5.7	8.8	2.5
Ժամկետ.. խնայ. և արտարժ. ավանդներ	-	-0.4	-3.4	0.9	-0.8	1.5	2.5	2.1	4.7	8.3
Այդ թվում՝ սառեցված	-	-4.8	-1.9	-1.4	-1.6	3.7	-21.5	2.4	1.5	9.2
Այդ թվում՝ արտարժույթով ավանդներ	-	-1.9	-4.5	1.4	-0.7	1.3	3.5	2.6	5.6	4.2
Ցպահանջ	-	23.3	-8.2	8.4	0.4	-0.4	10.4	3.0	2.5	0.8
Ժամկետային	-	-16.0	-1.4	-3.8	-1.7	2.8	-2.0	2.1	8.6	7.3
Այդ թվում՝ սառեցված արժույթ. ավանդ.	-	-4.8	-10.1	-10.7	-11.0	-3.6	-1.6	-3.8	-1.2	3.8

[1] Ընդգրկված չեն այն 6 բանկերի ցուցանիշները, որտեղ ՀՀ ԿԲ կողմից նշանակված է ժամանակավոր ադմինիստրացիա կամ գտնվում են խնամակալության տակ: Այդ պատճառով սույն աղյուսակի տվյալները տարբերվում են նախորդ հրապարակումների համապատասխան տվյալներից:

[2] ԶԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքով. առևտրային բանկերի ԶԱԱ-ն փաստացի փոխարժեքով:

[3] Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով. 1 ԱՄՆ դոլար = 561.81 դրամ, 1 ՀՓԻ = 1.2567 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 0.8904 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի = 276.5 ԱՄՆ դոլար:

[4] 2002 թ. հունվարից ԿԲ «Ներդրումներ ռեզիդենտ իրավաբանական անձանց կապիտալում» հաշիվը տնտեսության պահանջներից վերադասակարգված է այլ ակտիվներում, որի պատճառով տնտեսության նկատմամբ պահանջների՝ հունվարից ապրիլ ամիսների ցուցանիշները տարբերվում են նախկինում ներկայացված ցուցանիշներից:

[5] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[6] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[7] Ընդգրկում է ռեզիդենտների՝ դրամով հաշիվները և ցպահանջ ավանդները:

[8] Ներառյալ սառեցված հաշիվները և ավանդները:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1,2]

(մլն դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1[3]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2[4]	Արտարժույթով ավանդներ	M2X[5]
2001							
Դեկտեմբեր	65037	12076	77113	6316	83429	73917	157346
2002							
Հունվար	55839	12081	67920	7442	75362	72532	147894
Փետրվար	57778	12441	70219	7924	78143	69311	147454
Մարտ	58862	12427	71289	7609	78898	70345	149243
Ապրիլ	58709	13331	72040	7479	79519	69840	149359
Մայիս	59638	13647	73285	7761	81046	70739	151785
Հունիս	59668	15079	74747	7298	82045	73339	155384
Հուլիս	62338	14742	77080	7121	84201	75211	159412
Օգոստոս	63427	14187	77614	6754	84368	79425	163793
Սեպտեմբեր	66444	17480	83924	10535	94459	82757	177216

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ՝ ԱՌԱՆՑ ՍԱՌԵՑՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ [1,2]

(մլն դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1[3]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2[4]	Արտարժույթով ավանդներ	M2X[5]
2001							
Դեկտեմբեր	65037	11239	76276	6237	82513	66452	148965
2002							
Հունվար	55839	11305	67144	7377	74521	65426	139947
Փետրվար	57778	11735	69513	7876	77389	62924	140313
Մարտ	58862	11774	70636	7570	78206	64644	142850
Ապրիլ	58709	12690	71399	7457	78856	64766	143622

Մայիս	59638	13007	72645	7743	80388	65848	146236
Հունիս	59668	14429	74097	7290	81387	68525	149912
Հուլիս	62338	14098	76436	7112	83548	70579	154127
Օգոստոս	63427	13545	76972	6746	83718	74849	158567
Սեպտեմբեր	66444	16855	83299	10528	93827	78006	171833


[1] Ընդգրկված չեն այն 6 բանկերի ցուցանիշները, որտեղ ՀՀ ԿԲ կողմից նշանակված է ժամանակավոր ադմինիստրացիա կամ գտնվում են խնամակալության տակ: Այդ պատճառով սույն աղյուսակի տվյալները տարբերվում են նախորդ հրապարակումների համապատասխան տվյալներից:


[2] Ավանդների մեջ կուտակված տոկոսները չեն ընդգրկված:


[3] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ դրամը և ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):


[4] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և դրամով ժամկետային ավանդները:


[5] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):







Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
100
80
60
40
20
0
97
98
99
00
01
02


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
100
80
60
40
20
0
97
98
99
00
01
02



Փողի բազայի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
20
15
10
5
0
-5
-10
-15
99 00
01
02
Փողի բազա
Սղաճ


Փողի զանգվածի ամսական փոփոխությունը և ամսական սղաճը
%
12
10
8
6
4
2
0
-2
-4
-6
-8
99 00
01
02
Փողի զանգված
Սղաճ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՋՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ[1,2]

(մլն դրամ)

Ցուցանիշներ	2001	2002									
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս
Կենտրոնական բանկի ՋԱԱ	84908	91157	84532	81764	79629	80753	84002	84408	87192	94867
Առևտրային բանկերի ՋԱԱ	-3498	3200	2876	2727	4211	7508	10677	13658	15823	17242
Ընդամենը	81410	94357	87408	84491	83840	88261	94679	98066	103015	112109
Կենտրոնական բանկի ՋԱԱ [3]	***85782***	***91853***	***85194***	***82422***	***80199***	***81221***	***84615***	***84870***	***87701***	***95364***



[1] Ընդգրկված չեն այն 6 բանկերի ցուցանիշները, որտեղ ՀՀ ԿԲ կողմից նշանակված է ժամանակավոր ադմինիստրացիա կամ գտնվում են խնամակալության տակ: Այդ պատճառով սույն աղյուսակի տվյալները տարբերվում են նախորդ հրապարակումների համապատասխան տվյալներից:

[2] ՋԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ՋԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքով, առևտրային բանկերի ՋԱԱ-ն փաստացի փոխարժեքով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:

ՍԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1,2]

(մլն դրամ)

Ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ դրամ	M1	M2	M2X
2001					
Դեկտեմբեր	72931	55645	69656	76244	149534
2002					
Հունվար	73620	56194	68229	76090	148504
Փետրվար	77033	61846	75715	83398	153689
Մարտ	76008	62403	76690	83810	153518
Ապրիլ	79522	62527	76636	83747	156406
Մայիս	75093	63171	77112	84412	158544
Հունիս	77862	62661	78216	85209	160447
Հուլիս	74991	61332	75114	82285	157086
Օգոստոս	76513	62024	73828	80831	157467
Սեպտեմբեր	77099	63762	78789	89733	171985


[1] Ընդգրկված չեն այն 6 բանկերի ցուցանիշները, որտեղ ՀՀ ԿԲ կողմից նշանակված է ժամանակավոր ադմինիստրացիա կամ գտնվում են խնամակալության տակ: Այդ պատճառով սույն աղյուսակի տվյալները տարբերվում են նախորդ հրապարակումների համապատասխան տվյալներից:

[2] Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:


Հարթեցման մեթոդիկան նկարագրված է «ՀՀ կենտրոնական բանկի բանբերի» 2001 թ. 2-րդ եռամսյակի համարում հրապարակված «ՀՀ փողի ագրեգատների թվային շարքերի հարթեցումներ» նյութում:

Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ, համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: Այդ իսկ պատճառով «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում հրապարակվում են փողի ագրեգատների հարթեցված նոր շարքերը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակներ



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ[1]

(մլն ԱՄՆ դոլար)

Անվանումը	2001[4]	2002								
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	329.6	337.2	324.0	319.9	317.2	322.5	330.3	328.5	335.5	350.5
Համախառն միջազգային պահուստներ	333.2	340.8	327.6	323.6	319.8	325.2	333.6	331.9	335.8	350.8
Ոսկի[2]	12.4	12.6	13.2	13.5	13.8	14.6	14.3	13.7	13.9	14.4
ՀՓԻ ԱՄՀ-ում	10.2	8.4	6.1	6.1	4.1	4.0	1.9	0.1	9.6	9.2
Արտարժույթ[3]	310.6	319.8	308.3	304.0	302.0	306.6	317.3	318.1	312.3	327.3
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*[5]	***331.2***	***338.6***	***325.3***	***321.3***	***318.6***	***323.8***	***331.5***	***329.7***	***336.7***	***351.6***


[1] Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] ՀՀ ԿԲ ոչ ռեզիդենտ բանկերի թղթակցային հաշիվներում առկա ոսկու մնացորդը վերադասակարգված է և հանված է «Արտարժույթ»-ից ներառվելով «Ոսկու» մեջ, որի պատճառով սույն հրատարակման «Ոսկի» և «Արտարժույթ» տողերի մնացորդները տարբերվում են նախորդ թողարկումների համապատասխան ցուցանիշներից:

[3] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[4] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները: ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են հիմք ընդունելով 2001 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.2567 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է այդ օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից: Այս պատճառներով դեկտեմբերի համախառն միջազգային պահուստների ցուցանիշները տարբերվում են 2001 թ. դեկտեմբեր, 2002 թ. հունվար և փետրվար ամիսների ՀՀ ԿԲ տեղեկագիր պարբերականում հրապարակված համապատասխան ցուցանիշներից:

[5] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ[1]

Ցուցանիշներ	2001[4]	2002								
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս
Վարկեր [2]										
Իրավաբանական անձանց										
ՀՀ դրամով	27.5	23.4	20.0	24.3	19.9	19.3	24.1	27.0	27.7	12.5
ԱՄՆ դոլարով	20.3	28.6	20.7	17.3	15.6	21.9	20.5	20.4	23.0	20.1
Ֆիզիկական անձանց										
ՀՀ դրամով	30.2	29.8	29.3	28.0	28.4	28.1	27.5	27.7	26.6	28.7
ԱՄՆ դոլարով	35.5	37.1	34.0	37.1	36.3	36.5	37.3	36.4	36.5	35.7
Ավանդներ [2]										
Իրավաբանական անձանցից										
ՀՀ դրամով	15.0	10.0	12.0	13.0	9.6	11.0	12.0	8.8	6.5	12.1
ԱՄՆ դոլարով	9.7	4.0	14.0	6.7	10.1	9.0	6.9	6.6	6.3	6.0
Ֆիզիկական անձանցից										
ՀՀ դրամով	14.6	11.9	9.8	10.2	11.8	11.8	11.8	12.0	12.2	11.8
ԱՄՆ դոլարով	10.8	9.3	7.1	9.3	8.5	10.9	7.5	8.5	8.6	6.8
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	15.0	14.0	13.5	13.5	13.5	13.5	13.5	13.5	13.5	13.5
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	8.0	8.0	6.0	6.0	6.0	6.0	6.0	6.0	6.0	6.0
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	30.0	30.0	28.0	28.0	28.0	28.0	28.0	28.0	28.0	28.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը [3]	16.4	14.3	13.8	13.0	14.1	14.3	15.0	15.6	15.7	14.9
Սղաճ	2.9	2.2	-0.7	-0.6	2.5	1.7	-0.5	-5.0	-3.0	-0.6

[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


[2] Ներկայացված են 90-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:

[3] Ներկայացված է 9 – 12-ամսյա պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

[4] Ներկայացված են վերջին ամիսների տոկոսադրույքները: Սղաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ-01	Հ-02	Փ-02	Մ-02	Ա-02	Մ-02	Հ-02	Հ-02	Օ-02	Ս-02
1	-	-	563.99	568.18	576.96	-	-	575.35	561.16	-
2	-	-	-	-	577.26	579.34	-	573.79	560.55	556.49
3	566.51	561.81	-	-	577.56	579.34	582.22	572.14	-	555.92
4	566.51	561.81	563.84	568.18	577.56	-	582.22	569.39	-	556.23
5	566.51	-	563.18	567.71	577.88	-	582.38	-	560.37	555.98
6	566.51	-	563.28	568.68	-	579.75	582.38	-	560.02	555.24
7	566.51	562.15	564.21	568.68	-	580.07	581.92	-	559.49	-
8	-	562.55	564.09	-	577.88	580.84	-	567.88	559.00	-
9	-	563.01	-	-	578.28	-	-	568.10	558.46	555.08
10	566.20	563.70	-	-	578.28	580.84	581.92	568.52	-	555.62
11	565.85	564.15	564.25	569.45	578.18	-	582.03	568.52	-	556.39
12	564.94	-	564.05	570.10	577.22	-	582.32	568.52	558.46	557.78
13	564.76	-	564.42	570.55	-	580.27	582.58	-	558.46	557.78
14	564.45	564.60	565.00	571.12	-	580.58	582.83	-	558.13	-
15	-	565.06	565.53	571.57	577.22	580.93	-	565.74	558.13	-
16	-	565.48	-	-	577.22	580.93	-	565.74	558.20	557.78
17	564.86	565.48	-	-	577.76	580.53	582.54	565.50	-	557.90
18	564.86	565.98	565.53	571.57	578.46	-	582.84	565.20	-	557.90
19	564.86	-	565.27	571.98	578.86	-	580.88	562.36	558.47	558.00
20	564.86	-	565.84	572.66	578.86	580.53	580.88	-	558.04	562.20
21	564.86	565.16	565.84	572.84	-	580.87	578.83	-	557.33	-
22	-	564.86	566.86	573.58	578.86	580.87	-	562.64	557.75	-
23	-	564.44	566.86	-	578.97	581.14	-	560.57	557.98	571.00
24	564.51	564.27	-	-	-	581.14	578.83	560.97	-	575.51
25	563.62	564.18	566.86	573.98	579.09	-	578.65	560.97	-	579.03
26	563.37	-	566.86	574.82	579.79	-	578.53	561.95	557.66	580.18
27	562.49	-	566.96	575.12	579.79	581.48	578.53	561.95	557.66	580.18
28	562.20	563.85	568.18	575.55	-	581.48	577.14	-	557.92	580.18
